ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻ

ՀՐԱՄԱՆ

N° 177/2018-Ա
«20» սեպտեմբերի 2018թ.

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 124-րդ հոդվածի 13-րդ մասով, «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 23-րդ հոդվածի 2-րդ մասով, 24-րդ հոդվածի 3-րդ մասով, 6-րդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 30.08.2018թ. թիվ ԿԽ-006/18/2 որոշումը, Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովի նախագահ Ս.Միքայելյանի թիվ 39/18-Ու Ե-7676 առ 20.09.2018թ. գրությունը՝

Հրամայում եմ

1. Հաստատել վերաքննիչ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների 2018 թվականի ցուցակում ընդգրկված՝ քաղաքացիական մասնագիտացման բաժնի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձանց բաշխումն ըստ փորձաշրջանի ղեկավարների՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել վերաքննիչ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների 2018 թվականի ցուցակում ընդգրկված՝ քաղաքացիական մասնագիտացման բաժնի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձանց՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 2-ի:
3. Հաստատել վերաքննիչ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների 2018 թվականի ցուցակում ընդգրկված՝ քաղաքացիական մասնագիտացման բաժնի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձանց՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 3-ի:

Ռեկտոր **Ս.Առաքելյան**